


# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



## ԵՒՍ ՄԵԿ ՔԱՅԼ ԴԵՊԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(Խաչատրյան Լ. Լեզվաբանական ավանդույթներ, նոր եւ նորագույն  
ուղղություններ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2025)

**Ք**իտությունն առաջ է քայլում շնորհիվ մեծ նվիրյալների, մանավանդ  
փոքրա թիվ ժողովուրդների գիտությունը, որը, այդպիսին կոչվե-  
լու համար պետք է միշտ լինի աշխարհի նվաճումների առաջին գծում:  
Լ. Խաչատրյանի՝ վերջերս լույս տեսած «Լեզվաբանական ավանդույթներ,  
նոր եւ նորագույն ուղղություններ» ուսումնական ձեռնարկն իր ուրույն  
տեղն ունի մեր լեզվաբանության զարգացման գործում, քանի որ ընդգր-  
կում է աշխարհի այս բնագավառի եւ պատմական զարգացման ընթաց-  
քը, եւ մեթոդաբանությունը, որի ընկալումը եւ կիրառումը մեր այսօրվա  
երիտասարդ լեզվաբանների համար իսկապես անհրաժեշտություն է:  
Հեղինակը այս, ինչպես եւ նախորդ մի քանի աշխատություններում,  
փորձում է տալ լեզվաբանության գիտության հիմքը, որի շնորհիվ սո-  
վորական դատողություններն ստանում են հստակ ձեւակերպումներ եւ  
դառնում են գիտություն:

Կարելի է զարմանալ Լ. Խաչատրյանի աշխատասիրության եւ նվիրվա-  
ծության վրա, քանի որ վեր հանել եւ պարզաբանել լեզվաբանության վեց  
հազարամյա պատմությունը եւ ներկայացնել նրա զարգացման քայլերն  
այնպես, որ դրանք հիմք հանդիսանան ապագա հետազոտությունների  
համար՝ հեշտ եւ ամենքին տրվող աշխատանք չէ:

Ձեռնարկը գրված է խորհրդային լեզվաբանության տվյալների հի-  
ման վրա, որի տեսությունն ամենազարգացածն էր աշխարհում: Բացի  
այդ խորհրդային գիտական մամուլն անընդհատ ներկայացնում էր ըն-  
թերցողին արտասահմանյան գիտության վերջին նվաճումները: Խոսքս  
Ն. Ս. Չեմոդանովի, Ս. Գ. Բարխուդարովի, Վ. Ա. Զվեգինցեի, հետագայում  
Տ. Ա. Ամիրովայի, Բ. Ա. Օլիովիկովի, Ֆ. Մ. Բերեզինի, Ն. Ա. Կոնդրաշովի

եւ նրանց շրջապատող գիտնականների գործերի մասին է, որոնք լայն եւ հստակ օգտագործված են քննարկվող աշխատությունում:

Լ. Խաչատրյանն առաջին գլխում ներկայացնում է լեզվաբանության պատմությունն ու նվաճումների փուլերը մինչեւ 20-րդ դարի վերջը՝ ընդգծելով նաեւ հայ լեզվաբանների լուծման մեր գիտության զարգացման մեջ: Մասնավորապես նա նշում է Գ.Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» (հ. 1—2, Եր., 1961—1962) մենագրությունը, որից մասամբ օգտվել են նաեւ Տ.Ա.Ամիրովան եւ նրա համահեղինակները: Այս գլուխը հետաքրքիր է ոչ միայն իր բովանդակությամբ, այլեւ կառուցվածքով, քանի որ քայլ առ քայլ հետեւում է, թե ինչպես սովորական հակադրումը (ձայների, բառաձեւերի, բառերի եւն) պատմության ընթացքում ձեւավորում է իմաստաբանական, կառուցվածքային, ձեւաբանական, ինտեգրալ եւ այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս ներկայացնել լեզուն այնպես, որ նա կարողանա հանդիսանալ նաեւ ավտոմատ թարգմանության եւ լեզվի ավտոմատ ուսումնասիրման հիմք: Ուշագրավ է, որ պատմական նկարագրության մեջ հեղինակը կանգ է առնում մոտեցումների միջեւ եղած ոչ միայն ընդհանրությունների, այլեւ տարբերությունների վրա, նշելով, որ սկսած 19-րդ դարի վերջից՝ պատմական-համեմատական լեզվաբանության հետ մեկտեղ սկսում է թափ առնել տեսական լեզվաբանությունը Կազանի, Մոսկվայի, Պրահայի, Սորբոնի, Ժնևի մասնագետների ուժերով: Լ. Խաչատրյանի վարպետությունը կայանում է նրանում, որ նա «համատեղում է մոտեցումներն ու զարգացումները», ոչ մի տեղ չի նշում, որ որեւէ նոր ուղղություն վերացնում է նախորդ ուղղությունների ձեռքբերումները (չնայած այդ երեւոյթը տարբեր ժամանակաշրջաններում առկա է): Ընդհակառակը՝ հենց առաջին գլխում վերլուծված պատմական եւ տեսական մոտեցումները գնահատվում են նրա կողմից որպես զարգացում, որպես միմյանց լրացնող եւ լեզվական նյութն ավելի խորը մեկնաբանող տեսություններ: «Լեզվաբանական ավանդույթները, - գրում է նա, - տրվում են ոչ թե միմյանցից անկախ ձեռքբերումների եւ դպրոցների գործունեության կտրվածքով, այլ դրանց փոխադարձ կապերի, միմյանց օրգանական շարունակություն կազմող գիտական շղթայի հայեցակետով» (էջ 5):

Ավելի կարեւոր նշանակություն ունեն, ըստ իս, երկրորդ եւ երրորդ գլուխները, որոնք նվիրված են համապատասխանաբար լեզվաբանության ժամանակակից եւ նորագույն միջգիտակարգային ուղղություններին:

Ցավոք, պետք է նշեմ, որ Հայաստանի Հանրապետությունում 1990 թվականից այս կողմ գրված գիտական աշխատությունների 90 տոկոսը չունի գիտական մեթոդաբանական հիմք, մանավանդ դա վերաբերում է թեկնածուական եւ դոկտորական ատենախոսություններին: Սա մեր հայամբողջ խորհրդային շրջանի լեզվաբանության բացն է, եւ այս առումով Լ. Խաչատրյանի աշխատությունն ավելի քան արդիական է:

Երկրորդ գլուխը ներկա եւ ապագա հայ լեզվաբաններին պարզաբանում է հաղորդակցական, ճանաչողական, մշակութային, համակարգչային եւ այլ ուղղությունների էությունը: Այս կարճ ակնարկի խնդիրը չէ կանգ առնել դրանցից ամենքի բովանդակության վրա, բայց անհրաժեշտ է նշել, որ հեղինակը ուղադրությունը սեւեռում է տեսությունների տերմինների, կառուցվածքի, մոտեցման սկզբունքների, նպատակային խնդիրների վրա, ինչով սրանցից յուրաքանչյուրը ներկայացվում է ամբողջությամբ: Ուղադիր ընթերցողը կարող է նկատել, որ բոլոր մոտեցումները ներկայացված են գրեթե համաչափ, քանի որ համաչափ տարածում են գտել գիտության մեջ: Իհարկե հաղորդակցական եւ ճանաչողական լեզվաբանությունն ավելի մեծ նշանակություն ունի մեր գիտության զարգացման համար, քան լեզվամշակութաբանությունը, կիրառական լեզվաբանությունն այսօր ավելի պահանջված է, քան տեքստի լեզվաբանությունը, սակայն հեղինակն իրավացի է՝ ներկայացնելով դրանց սկզբունքները լիակատար, քանի որ բանասիրական ուղղությամբ սովորող ուսանողների համար սա անհրաժեշտ է:

Երրորդ գլուխը, ինչպես նշեցինք, նվիրված է լեզվաբանության նորագույն ուղղություններին: 21-րդ դարի գիտությունը փորձում է պարզաբանել նաեւ միջգիտական առանձնահատկությունները, քանի որ առանձին ճյուղեր իրենց ներքին խնդիրների լուծումները գրեթե սպառել են: Բացի այդ, կյանքը թեւադրում է համատեղել տարբեր գիտությունների նվաճումները՝ աշխարհի գաղտնիքները պարզաբանելու եւ ապագայի ճիշտ ուղի որոնելու համար: Այսպիսով, ի հայտ են գալիս մաթեմատիկական, հոգելեզվաբանական, նյարդալեզվաբանական եւ այլ ուղղություններ: Չեմ կարծում, որ սրանք բոլորը կստանան հավասար զարգացում ապագա սերունդների աշխատություններում, բայց մենք պետք է նշենք մեր գիտնականի՝ ապագան տեսնելու միտումն ու ունակությունը: Ըստ հեղինակի՝ ոչ միայն լեզվի տարբեր բաժիններն են պահանջում հատուկ մոտեցումներ, այլեւ լեզվի կիրառման տարբեր բնագավառները: Բացի այդ՝ մեծ

տարածում են ստանում լեզվի ուսուցման հետ կապված մոտեցումները, օրինակ՝ լեզվամշակութաբանությունն ու լեզվաերկրագիտությունը, քանի որ բոլոր ժամանակներում բազմալեզու գիտնական ներն ու ոչ գիտնականները պահանջված են:

Հատուկ պետք է նշել հեղինակի գիտական ոճը՝ պարզ, հասկանալի, առանց իմաստային բարդությունների, ինչը համապատասխանում է ուսումնական ձեռնարկներին ներկայացվող պահանջներին:

Այսպիսով՝ քննարկվող աշխատությունը նոր քայլ է հայ լեզվաբանության զարգացման եւ բանասիրական կրթության մակարդակի բարձրացման գործում, ու այն պետք է ողջունել:

ՎԱՂԱՐՇԱԿ ՀՆՁԱՅՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

